ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՄԱՀՎԱՆ 750-ԱՄՅԱԿԻՆ

Միջնադարյան հայ ականավոր գիտնական, գրող ու մանկավարժ, մեծ մտածող Մխիթար Գոշի մահվան 750-ամյակին էր նվիրված ՀՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ «Մատենադարանի» սույն թվականի ապրիլի 10-ի հոբելյանական գիտական նստաշրջանը։

Նստաշրջանի բացման խոսքի մեջ Մատենադարանի դիրեկտոր, ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանը ընութագրեց Մխիթար Գոշի ժամանակաշրջանն ու սոցիալ-քաղաքական միջավայրը, անդրադարձավ նրա կյանքի, գիտական ու մշակութային գործունեության հիմնական հարցերին։

ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը զեկուցում կարդաց «Մխիթար Գոշի մատենագրության պատմական արժեքը» թեմայով։ Գոշի մատենագրության մեջ,—ասում է զեկուցողը,—բացառիկ արժեք են ներկայացնում նրա առակներն ու Դատաստանագիրքը։ Գոշը գոյություն ունեցող օրենքների ու իրավական նորմերի արձանագրող չէր միայն, այլև շրջահայեցաբար, դարաշրջանի ու միջավայրի կոնկրետ պահանջների հաշվառումով, սրբագրում էր դրանք, զեկավարվելով բնական օրենքի ընդհանուր սկզբունքներով։

Գոշը,—շարունակում է զեկուցողը,—կողմնորոշվում էր դեպի հայերի եկեղեցական ու քաղաքական ինքնորոշումը, հույս դնելով վրաց թագավորության վերելքի վրա։ Նա երկրի ազատագրման նախապայման էր համարում սելջուկների դեմ հայ-վրացական ուժերի համախմբումը, ֆեոդալական անիշխանություններ հակադրում էր կենտրոնական թագավորության իր տեսությունը, հավատում էր հայկական թագավորությունը վերականգնելու հեռանկարին, հետամուտ էր ֆեոդալական ճնշումների մեղմացմանը, համոզված լինելով, որ «ազատ յարարչէն եղև մարդկայինս բնութիւն»։ Գոշի ռեալիստական մտածողությունն արտահայտվում էր այն բանում, որ նա ճորտերի անազատ վիճակը հետևցնում էր հողի և ջրի բնական կարիքից։ Գոշը մարդկանց «բնական իրավունքի» իր ուսմունքով ընդառաջում է երկրի ու ժողովրդի ընդհանուր շահերին ու առաջավոր մղումներին։ Նրա ընդհանուր իրավահայեցողությունը չի կանխում գալիք դարերը, այլ գիրքավորվում է իր դարում առաջավոր բնույթ ստացած տենդենցներից մեկի օգտին։

«Անձի քրեական-իրավական պաշտպանության հարցերը ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի» թեմայով հանդես եկավ դոցենտ Ա. Թովմասյանը։ «Գոշի Դատաստանագիրքը,—ասաց նա,—իր ժամանակաշրջանի իրավաբանական մտքի ամենամեծ նվաճումներից է։ Դարեր շարունակ այն եղել է գործող օրենսդրություն և աղբյուր ծառայել ինչպես հայ, այնպես էլ մի շարք այլ ժողովուրդների օրենսդրական-իրավաբանական հուշարձանների համար։ Դատաստանագրքում հետևողականորեն հանցավոր ոտնձգություններից պաշտպանվում է անձը, մարդու կյանքը, առողջությունը, անձեռնմխելիությունը, պատիվն ու արժանապատվությունը։ Նրա իրավանորմերը ձևակերպված են դասական պարզությամբ, հաճախ արտահայտված և անթերի կերպով։ Լինելով մեծ մարդասեր և իրավաբան նա, այնուամենայնիվ, հեռու չէր ժամանակաշրջանի տիրապետող աշխարհայեցողությունից և մարդկանց միջև դասային-դասակարգային բաժանում ու խտրականություն ընդունելու սկզբունքներից։

Դատաստանագրքի ստեղծման պատմությանն էր վերաբերում բանասիրական գիտությունների թեկնածու Աս. Մնացականյանի զեկուցումը։ Մատնանշելով Դատաստանագիրքը շարադրանքի ու կառուցվածքային տեսակետից ուսումնասիրելու անհրաժեշտությունը, զեկուցողն ասում է, որ Գոշի այդ երկը մեզ է հասել երկու հիմնական խմբագրություններով, սակայն խմբագրությունների ուսումնասիրությունը տակավին ըստ արժանվույն չէ և նոր հետազոտությունների ու ստեղծագործական քննարկումների անհրաժեշտություն է հարուցում։ Դատաստանագրքի, և առհասարակ ամեն մի նշանակալից ստեղծագործության հանգեպ գալը միջնադարում բախվում էր երկրի կրոնական հետադեմ ուժերի, ինչպես նաև օտարերկրյա տիրապետողների դիմադրությանը։ Գոշը մտորումների մեջ էր. նա «զարհուրեալ ի պարսաւագիտաց» չէր կարողանում սկսել իր աշխատանքը։ Դասնո անապատի մտավորականներն ու Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը պաշտպանության տակ էին առնում Գոշին։ 1184 թ. Դատաստանագիրքն արդեն պատրաստ էր։ Սակայն Ստեփանոս կաթողիկոսի սպասելիքները չարդարացան, նա չստացավ իր ցանկացած Դատաստանագիրքը, ուստի սկսեց հալածել Գոշին։ Դատաստանագրքի հեղինակը նորից դեգերումների ու մտորումների մեջ ընկավ։ Այժմ նոր հովանավորություն էր պետք Դատաստանագիրքը ճանաչել տալու և գործողության մեջ գնելու համար։ Վերջապես, Դատաստանագիրքը քննարկվում և հավանության է արժանանում Գետիկում, ասել

համընդհանուր ճանաչում գտնում Կիլիկիայում, տարածվում ամբողջ Հայաստանում, իսկ հետո նրա սահմաններից դուրս, հայ գաղութներում։

Երևանի շրջանային սովետի գործկոմի նախագահ Ռ. Էլլարյանի զեկուցման թեման էր «Նոր Գետիկի վանքը և Մխիթար Գոշը»։ Զեկուցողը պատմական տեղեկություններ տվեց Նոր Գետիկի, ինչպես նաև շրջակա մյուս հուշարձանների մասին, նշեց, որ Նոր Գետիկի վանքը հայ միջնադարյան ճարտարապետության հոյակապ կոթողներից է, նա եղել է ժամանակի գիտական և ուսումնական խոշորագույն կենտրոններից մեկը, այդ վանքի հիմնադրումն ու որպես մշակութային օջախի բարձրացումը կապված է Մխիթար Գոշի անվան հետ։ Զեկուցողը ցանկություն հայտնեց Նոր Գետիկի վանքը վերածել թանգարանի և նրա առաջ դնել Մխիթար Գոշի արձանը։ Նա առաջարկեց Գոշի հոբելյանին նվիրված գիտական նստաշրջան անցկացնել նաև Երևանում, տեղի աշխատավորության ներկայացուցիչներին մասնակից դարձնելով նստաշրջանի աշխատանքներին։

Բանասիրական գիտությունների թեկնածու Է. Պիվազյանը զեկուցեց Գոշի առակների մասին։ Նում,—ասում է զեկուցողը,—գեղարվեստական դրականությունը, հատկապես արձակը, ինքնուրույն բնագավառ չէր, այլ համադրված էր պատմագրությանը։ Գոշի առակների ժողովածուն ա՛ղ տեսակետից առաջին արձակ գեղարվեստական երկն է, իսկ նրա հեղինակը գեղարվեստական արձակի հիմնադիրն է հայ գրականության մեջ։ Առակներում արտացոլված է ժամանակի հասարակության պատկերն իր բազմազան գծերով, այլաբանորեն ներկայացված են հասարակական տարբեր խավերի, դասերի ու դասակարգերի ներկայացուցիչներն իրենց փոխհարաբերությունների մեջ, շոշափված են սոցիալական խնդիրներ։ Գոշը ծաղրում է աշխատավորների ունեցվածքը հափշտակող իշխաններին, շար առաջնորդներին, ադահ ու կաշառակեր հոգևորականներին։ Գոշն աշխատավորության գաղափարախոսը չէ, բայց համակրում է այդ դասին, ջանում է հաշտեցնել «հնազանդյալներին» ու տերերին, հոգևոր և աշխարհիկ իշխաններին՝ ազգային ուժերը համախմբելու և արտաքին թշնամու դեմ ուղղելու նպատակով։ Նրա առակների մեծ մասի սյուժեն ինքնուրույն է, մյուսների համար աղբյուրներ են եղել Ս. գիրքը, «Բարոյախոս»-ը և ժողովրդական առակները։ Մեծ մասամբ առակների նյութը բաղված է կենդանիների, սակավ գեպքերում՝ բույսերի ու մարդկանց կյանքից։ Այնուհետև զեկուցողն առակները բաժանում է երեք հիմնական բաժինների և տալիս դրանցից յուրաքանչյուրի գիտական վերլուծությունը։

Մատենադարանի գիտաշխատող Խ. Թորոսյանի թեման էր «Մարդու և անձի պրոբլեմը Մխիթար Գոշի Դատաստանագրքում»։ Զեկուցողը նշում է, որ Գոշը իրավական նորմերի ստեղծող, հավաքող ու գրանցող չէ, այլ իր վերաբերմունքն է հանդես բերում այդ նորմերի նկատմամբ։ Դատաստանագրքում առկա է ոչ միայն Գոշ-իրավաբանը, այլև Գոշ-մտածողն ու մեծ մարդասերը։ ԱԹՆ նախորդ դարերում, աշխարհի տարբեր ժողովուրդների հին դատաստանագրքերում իրար դեմ կանգնած են մարդն ու անձը՝ որպես տարբեր և հակադիր հասկացություններ, ապա այդպես չէ Գոշի դատաստանագրքում։ Այնտեղ «մարդ» և «անձ» հասկացությունները հակադիր չեն, այլ համատեղվում են։ Դատաստանագրքի նորմերը ձևակերպված են հստակ, նրանցից շատերի մեջ առկա է արդարահոգությունը. հանցանքը բոլոր դեպքերում պետք է պատժվի, անկախ այն բանից, թե ով է հանցանք կատարողը։ Չնայած Գոշը հետևում չէ մարդկանց միջև ինչպես դասակարգային, այնպես էլ ազգային ու կրոնական խտրականություն տեսնելուց, սակայն կարևորն այն է, որ Գոշի մոտ գոյություն ունի մարդը, որը և անձ է։ Դրանով էլ, առաջին հերթին, Գոշը միջնադարում վեր է բարձրանում ոչ միայն որպես մեծ իրավագետ, այլև որպես մեծ մտածող ու մարդասեր։

Հ. ԱՄԱԼՅԱՆ

ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆԸ

Սույն թվականի ապրիլի 3-ին Երևանի պետական համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, նվիրված համալսարանի ՍՍՌՄ պատմության ամբիոնի վարիչ, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Հարությունի Ռշտունու ծննդյան 70-ամյակին և գիտա-մանկավարժական գործունեության 50-ամյակին։

Հանդիսավոր նիստը բաց արեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր, բիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հ. Բատիկյանը։ Նրա ներածական խոսքից հետո հոբելյարի գործունեության մասին զեկուցեց դոցենտ Ռ. Մովսիսյանը։